ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-23/6 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 11.04.2023թ. կնքված N ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-23/6-4 ծածկագրով պայմանագրում 2023 թվականի մայիսի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար «Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ «Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի և «ՆԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2023 թվականի մայիսի 12-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է ապրանքի մատակարարման դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2023 թվականի մայիսի 12-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 11.04.2023թ. կնքված N ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-23/6-4 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿի կողմից ապրանքի մատակարարման ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի մատակարարման ձեռքբերման համար «Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ**